

ՎԱՐԵՑԱՒ ՄԱՐՄՆՈՎ ՈՐՊԷՍ ԶՈՒԱՐԹՈՒՆ.

ՄԻՆՁԵՒ ԺԱՄԱՆԵԱՑ ՆՄԱ ՕՐ ՄԱՀՈՒՆ.

ՎԱՆՃԱՆԵԱԼ ԱՄԱՑ ԵՐԿԱԿԻ ՅԻՍՈՒՆ:

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1761 Ի ՄԱՐՏԻ Յ:

Մինչդեռ Սարգիս Արքեպիսկոպոս Հռոմ էր, Ս. Ժողովը տեսնելով որ վերոյիշեալ Վրթանէս Արքեպիսկոպոս ծերութեան պատճառաւ անկարող էր ձեռնադրութիւն կատարել, Գահերէց Կարգինալն ուղեց որ Սարգիս Հռոմ մնայ իբրեւ Օգնական ձեռնադրիչ: Սակայն Սարգիս խնդրեց զինք ազատ կացուցանել, վասն զի ինք գիտաւորութիւն ունէր տպագրական եւ առաքելական գործերով ազգին լուսաւորութեան աշխատիլ, ինչպէս ինքն 1773ին առ Ս. Ժողովն գրած նամակին մէջ կը յիշէ: Այն տեսն Ս. Ժողովոյ Գահերէցն 26 Յունուար 1746ին Սարգիս Արքեպիսկոպոսին նամակ մը (Գիւ. Լիւ.) գրելով՝ կը խնդրէ իրմէ, որ նամակ գրէ այլեւայլ տեղեր, ինչպէս նաեւ Մինաս Եպիսկոպոսին, որ վենետիկ Միսիթարեանց վանքը կը բնակէր իբրեւ ձեռնադրիչ, եւ ներկայացընէ հայ կաթողիկեայ վարդապետ մը (որ չըլլայ նորագարձ), որ ունենայ պահանջուած յատկութիւնները, եւ զայն ձեռնադրել տան իբրեւ Օգնական Եպիսկոպոս Վրթանէս Արքեպիսկոպոսին, եւ իրեն որոշեալ ամսական մը կապեն: Այս Օգնականն եւ յետոյ յաջորդն եղաւ՝ Անտոնեան Միաբան Հ. Յովսէփ Վ. Ստեփանեան՝ (կամ Այվազեան, Աճէմեան) որ 22 Յունիս 1749ին ի Լիբանան՝ յեկեղեցւոյ վանաց Յիսուս Փրկչի Աբրահամ Պետր. Ա. Ար-